

Համազասպուհի.—Իբր թէ պարապորդ ու թիւնը՝ ազատու թիւն է, իբր թէ աշխատանքի վրայ խօսիլը՝ ազատութեան դէմ խօսիլ է։ Ի՞նչ թիւր հասկացողութիւն և ի՞նչ կորստաբեր ճանապարհ։ Ըգատը նա է, որ ուրիշ աշխատանքով չապրիր։ Ըգատը նա է, որ մօզաներու և նորելու կներու գերի գարձած չէ։ Ըգատը նա է, որ հաստատուն կամք ունի բարին ու օգտակարը գործելու և չարէն ու զնասակարէն հեռանալու։ Ըյսպէս կը հասկընանք մենք ազատութիւնը։

Վարկի.—Ի՞նչ հարկէ երկար խօսիլ, Համազասպուհի, քանի որ ըսածներդ միայն դու պիտի լսես։ Սի՛րթէ կը կարծես թէ Նազենիկին ու Նուարդը չե՛ն գիտեր, որ աշխատանքը պարապորդութենէ աղէկ է։ Սի՛րթէ կը կարծես որ պիտի համոզուին ըսածներէդ։ Այս չեմ կարծեր, վասն զի համոզուելու համար կամք հարկաւոր է։ Քանի որ կամք չը կայ՝ հետեւեալէս համոզուելն ալ շատ դժուարին է։ Ուրեմն կ'աղաչեմ որ թողուս այդ խնդիրը։

Նազենիկի.—Ինչո՞ւ թողու թող խօսի Նուարդը։ Այո՛ թող խօսի, գուցէ պիտի համոզուիք։

Համազասպուհի.—Ըգտը համոզուեցէք, կուզէք մի համոզուիք։ Ես իմ կողմէն հաստատ համոզուած եմ, որ թէ հարուստ և թէ աղքատ ամենքն ալ պարտաւոր են աշխատիլ։ Ես համոզուած եմ որ կանանց ու աղկանց մաքրասիրութիւնը և պարզակեցում թիւնը ընտանեկան կենաց զարդն է։ Ես համոզուած եմ, որ տանտիրէնութիւնը, ասղնեգործութիւնը, բարեպաշտ վարք ու բարքը իզական սեռի վայելուչ պատկն է։ Ես համոզուած եմ, վերջապէս, որ օրինաւոր կրթութիւն մը, համեստ ու ամօթխած վարմունք մը և աշխատանքը աւնակու-

թիւն մը՝ աղկանց ամենէն մեծ օժիտն է, որով կարող են արժանաւոր մարդեր և տանտիրէններ ըլլալ։ Ես է իմ համոզումը, այս է իմ կարգացածը։

Սարգսիկ.—Կերեւի թէ, զամբիւղներու չը պիտի առնէք գուք, հոգ չէ, առնողներ շատ։ Եստուած անպակաս ընէ Հայոց բարեսիրտ տիկնայքն ու պարոնայքը։ Ուրեմն մնայ բարեալ։

Երևի.—Ինչո՞ւ բարեալ։

ՐԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌՆԱԿՆԻ ՈՒ ՔԱՆԱԿԱԿԻՐ ԳԱՏԱՆԻ

(Հարուստութիւն, օրն թիւ 8)

ԿԵՆ.

Բայց զգայ կեցիր. քաղաքակրթութիւնը քաղցր խօսքերու և շնորհակալութեանց շատութեանը վրայ կայացած չէ, որոնք մեր գգացմունքը չեն յայտներ. այլ կը կեղծեն։ Ստեփանը միշտ սուրկիկն, հագուած սգուած կը տեսնես. բերնէն մարդավարական խօսքեր ու ցուրտ շնորհակալութեան կերպեր ջրից կը վազեն. ամեն վարկեան շնորհակալ կ'ըլլայ. ամեն վարկեան ներում կը խնդրէ. կարծես թէ առանց քեզ չկրնար հանգիստ ըլլալ. թեթեւ մէկ տկարութիւն մը ունենաս՝ կարծես թէ քուսն աչքէն կը կտրի. ամեն ըրածիդ վրայ կը զարմունայ, կը զմայլի. անանկ որ թէ որ դեռ ձը Եռնուարի մէջ կը հաննի լսես, Համարձակիր դէմ դնելու։ Ստեփանն է իրեն նմաններն համ կ'առնուն. բայց խելք ունեցողներն ամենքն ալ կը խորշին։

Վաղաքակրթութիւնն ուրիշ բան չունի չէ, եթէ ոչ մարդավարութիւն,

ներողամտութեան, ու բարեորոշութե
գգացմունքն իսկ յայտնել ուրիշներուն.
Թէ որ սրտիդ մէջ այսպիսի գգացմունք
ներ ունիս՝ առաց ներողութեան կը յայտ
նես, և բարի ու ազնուասիրտ կը հա
մարուիս. բայց թէ որ չունիս ու կ'ու
զես ձեռացնել կեղծաւոր ես ու խա
բեբայ:

Արդասեբ, ներողիք բարեիրք եղիր.
ասոնք են ծաղիկք մարդավարութեան:
Արդասեբ ուրիշն յաղողութեանը վը
րայ ուրախացիր և թշուառութեան
վրայ տուով. որչափ ձեռքէդ կուգայ,
նայէ ուրիշն չարիք չհասցընես ու
տհաճութեան պատճառ չըլլաս. այլ
ջանա մանաւանդ ընկերութեան ու
բախտութիւնները շտոցունել: Արդա
սեբ՝ թեթեւ նախատանաց ներէ, ու
րիշն գործքերը ՚ի բարին մեկնէ. պա
կասութեանց արգահատէ, յիշելով որ
մարդկանց մէջ կատարեալը քիչ պա
կասութիւն ունեցողն է, մի պահան
ջէր որ ուրիշները քեզի պէս հագուին,
ուտեն, մտածեն ու խօսին. այսպիսի
անմեղ բաներու մէջ ուրիշներուն ա
զատութիւնը մի բռնադատէր: Իսկ
սեբ՝ մարդկանց միշտ աղէկութիւննե
րը տես. աւելի անոնց առաքինու
թեանցը հաւատք ընծայէ քան ակ
տերուն, որով սիրէ յարգէ ու կարե
կից եղիր, պատրաստ ըլլալով ամենայն
բարիք ընելու:

Կ. Գ.

Համառօթ նկարագիր ատայիկի ու չաղա
տակիր մարդու ժը:

Գեղեցիկ մտածութիւն մըն է գե
րեզմանատունները հասարակաց ձամ
բաներու վրայ շինելը. մարդս ձամբէն
անցնելու ժամանակ վայրկեան մը այն
փակարանին առջեւ կանկ կ'առնու և
ուրիշ ձամբորդութեան և նպատակի

մը վրայ կը մտածէ և . ինչպէս որ երե
կոյեան մթոյն յառաջիւր տեսնելով
ընթացքը կ'արագէ, այսպէս ևս նաև
մահը յիշելով կը փութայ, քանի որ
ժամանակ ունի, բարի գործելու:

Անցեալ ամառն մէջ որ մը գեղի
մը գերեզմանատան անջուէն կ'ան
ցնէի, որուն վրայ կմտնէր մը նկար
ուած էր՝ սոյն սովորական տողերով:

Ես ալ էի քեզի պէս,
Դուն ալ կըլլաս ինձի պէս.
Մտածե դաս. Տեր ընդ քեզ:

Այսպ այս տողերուն վրայ մտա
ծել ու ինքնիրենս. Այն ունայնու թեան
մարդկային գործոց, ըսելով, հառաչե
ցի. հոս է ամենուն վախճանը. մու
րացկանին ու թաղաւորին, հոս մարդ
կութեան ամենայն փառասիրութիւն
քը կը փշրին. հոս ամենայն ինչ կը թռ
ղուի՝ բայց ՚ի գործոց: Այսչափ սակա
ւատե է կեանքերնիս. և ինչ շահ չա
րութեամբ ապրելնէս, հոս պիտի ժռ
ղովիք ամենքնիս. ինչ շահ ուրեմն
թշնամութենէ, սխալութենէ, մեր եղ
բարքը չարչարելէ: Ասոնք մտածելով
ծունկի վրայ եկայ ու ի խորոյ մը ըսի
այն խեղճ հոգւոց համար, օրհնելով
միանգամայն իմ կրօնքս՝ որ և ոչ մա
հուամբ կը քակէ այն բարեգործե
լու և սիրոյ կապերը՝ որ բարեարտու
թեամբ զմեզ մեր եղբարցը հետ կը
լծորդէ. և ահա խաղի մը վրայ աչքս
գարձընելով՝ այսպէս կարդացի:

ԱՂՕԹԵՑԷԲ
ԻԵՂՁ ՍԵՐՈՒԹԵԻՆ ԿԱՄԱՐ
ԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ
ՊԱՐԿԵՏ ԱՌԱՔԻՆԻ ԱՆՍԳԻՒՆՑ

Ինձի այսպէս մը երեւեցաւ որ այս
բառերո ճշմարիտ առաքինի ու քա
ղաքակիրթ անձի մը նկարագիրն էին,
ուստի գեղին մեծը գտնելով՝ ինչ
մարդ ըլլալն հարցուցի:

(Շարունակելի):